

25.938

Լ. ԶԱԼԿԻՆԴ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ
ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ
ՅԵՐԵՎԱՆ

12 APR 2013

05 JAN 2010

334.5

Լ. ԶԱԼԿԻՆԴ

2-16^ս

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ
ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄԸ

1003
13327



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԳԳՅՈՒՂԿՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927 թ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՍԵՍ
 ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 408,⁷
 ՏԻՐԱԺ 3000

Այժմ հազիվ թե գտնվի մեկը, վոր կոտակե-
 րացիայի մասին լսած չլինի, իսկ Խորհրդային
 Հանրապետությունների բազմաթիվ գյուղերում
 և ավաններում գտնազան տեսակի կոտակե-
 րաիվ կազմակերպություններ են աշխատում: Չը
 նայած դրան, կան հույսեր, որ այնպիսիները, վո-
 րոնք թեև կոտակերատիվի անդամ են, բայց և
 աշխատեա բավականաչափ լավ չեն յուրացրել, թե
 ինչ նշանակութուն ունի կոտակերացիան անտե-
 սության մեջ, ինչպես պետք է ընթանա նրա
 աշխատանքը և ինչ պարտականություններ ունի
 կոտակերատիվի շարքային ամեն մի անդամը: Կան
 և այնպիսիները, յ՜վորոնք վոչ միայն բոլորովին
 չեն հետաքրքրվում իրենց կոտակերատիվի աշխա-
 տանքներով, այլև այդ աշխատանքներին մաս-
 նակցելու ձևն ել չգիտեն: Շատերի աչքում կո-
 տակերատիվը մի խանութ է, վորտեղ կարելի յե
 ապրանք գնել, կամ վորին կարելի յե իր տնտե-
 սության մթերքներից մի վորեւե բան ծախել,
 կամ՝ վորտեղ կարելի յե վարկ ստանալ և ուրիշ
 վոչինչ: Այնինչ կոտակերացիան կարող է ոգնել
 գյուղացիութեանը զգալի կերպով բարելավելու
 իր տնտեսութեանը, լուծելու այնպիսի խնդիր-

ներ, վորոնց լուծումն առանձին անհատ գյուղացիների ուժերից վեր ե։ Դրա համար ել ամեն մեկը պետք ե պարզ իմանա, թե ինչ ոգուտ կարող ե տալ կոոպերացիան, ինչ ձևով պետք ե ամենալավ կերպով տանել կոոպերատիվի աշխատանքը և ինչու՞ն ե կայանում կոոպերատիվի ամեն մի անդամի պարտականությունները։

Այս գրքուկում մենք կաշխատենք այդ ամենի մասին համառոտ կերպով պատմել։

ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ ԽՈՍԲԸ

Կոոպերացիան ոտարագլի բառ ե և նշանակում ե «միասին կատարած աշխատանք»։ Դեռ շատ հին ժամանակներից մի շարք զեպքերում մարդը հասկացել ե, վոր մի մարդու ուժերով վոչինչ չի կարելի անել և գործի հաջողության համար անհրաժեշտ ե մի քանի մարդկանց ուժերը միացնել։ Զանազան ժամանակներում մարդկությունը գիտեր միասին, միատեղ աշխատելու բազմատեսակ ձևեր։ Այդ միասին աշխատանքը կատարվում ե ամեն մի ընտանիքում, նրա առօրյա կյանքում, միատեղ աշխատանքով են ոգտվում ամեն ժամանակ զանազան տեսակի արտելները։ Մարդկանց մեծ թվի,

(մեծ բազմության) «միատեղ աշխատանքը» գործագրում եյին և ճորտատիրական ժամանակվա կալվածատերերը և գործարանատերերը, վորոնք ոգտվում եյին մի քանի հազարների հասնող բանվորների աշխատանքով, վորոնց նըրանք հավաքում եյին մի գործարանում կամ մի գավոգում։ Բայց հասկանալի չե, վոր այդ միատեղ կատարված աշխատանքի մեջ կոոպերացիայի վոչ մի նշույլ անգամ չի յեղել, վորովհետե կոոպերացիայի անվան տակ մենք հասկանում ենք այնպիսի միասին կատարած աշխատանք, վորը հիմնված լինի մարդկանց կամավոր համաձայնության վրա և վորը նպատակ ունենա նրանց տնտեսական ոգուտը միացնել։ Կոոպերացիայի կարևորագույն նշանակությունը հենց նրանում ե կայանում, վոր նա ոգնում ե մարդկանց այնպես կազմակերպել իրենց տնտեսական աշխատանքը, վորպեսզի այդ աշխատանքի արդյունքներն ուրիշների գրպանը չը մտնեն։ Այդ իսկ պատճառով վոչ մի կոոպերացիա չի յեղել այն ճորտերի աշխատանքի մեջ, վորոնք իրենց միատեղ աշխատանքով կալվածատերերի համար հարստություններ են գեղել, ինչպես և կոոպերացիա չի յեղել այն բանվորների աշխատանքի մեջ, վորոնց շահագործել ե գործարանատերը։

կոոպերացիան իր իսկական կերպարանքով՝
յերևան ե յեկել վոչ այնքան վաղուց՝ 80 տարի
սրանից առաջ:

Կոոպերացիայի առաջին կազմակերպողները
յեղել են անգլիական ջուլհակ-բանվորները, վո-
րոնք միջոց եյին փնտրում իրենց դրուժյունը
բարելավելու համար: 1844 թվին անգլիական
ջուլհակների գործերը չափազանց վատ եյին: Նրանք իրենց ծանր աշխատանքի համար չնչին
աշխատավարձ եյին ստանում և հազիվ եյին
կարողանում կերակրել իրենց ընտանիքներին,
վորովհետև հացը և այլ կենսամթերքները չա-
փազանց թանկ եյին:

Նրանք տեսնում եյին, վոր բացի այն յե-
կամուտներից, վոր նրանց աշխատանքի շնորհիվ
ստանում եյին գործարանատերերը, նրանց փո-
ղերի մի զգալի մասն ել ընկնում եր զանազան
առևտրականների ձեռքը, վորոնցից նրանք գը-
նում եյին հաց, միս և ուրիշ ապրանքներ:

Յեվ ահա, բանվորներն այդ ժամանակնե-
րում, վորոնց մտքովն անգամ դեռ չեր անց-
նում, թե կարող են գործարանատերերին տա-
պալել, դեն չպրտել, և դառնալ գործարանի-
տերը, վորոշում են իրենց ապահովել գոնե
առևտրականների թալանից: Այդ նպատակով ել
նրանք կազմակերպեցին առաջին կոոպերատիվը,

վորտեղ կարելի եր պետք յեղած ապրանքը գը-
նել առանց ավելորդ վճար տալու առևտրա-
կաններին: Ջուլհակների փոքրամթիվ խմբակնե-
րից հավաքած կոպեկներով նրանք կազմեցին
մի փոքր դրամագլուխ, վորով բաց արին մի
փոքրիկ խանութ և սկսեցին իրենց անդամնե-
րին անհրաժեշտ ապրանքներ մատակարարել:
Կարճ ժամանակամիջոցում նրանք համոզվեցին,
վոր այդ գործը նրանց համար շահավետ ե:
Թեև ապրանքները նրանք ցածր գներով եյին
ծախում, այնուամենայնիվ գրանից վորոշ ու-
ղուտ եյին ստանում, վսրը վոչ թե առևտրա-
կանի գրպանն եր մտնում, այլ գործադրվում
եր կոոպերացիայի հետագա շրջանառությունը
մեծացնելու համար:

Այն քաղաքը, վորտեղ առաջին անգամ կո-
ոպերատիվ կազմակերպեցին, Ռոչդել եր կոչ-
վում: Յեվ ահա ոռչդելյան ջուլհակագործ բան-
վորների այդ ձեռնարկությունը հարեան քա-
ղաքների բանվորների հետաքրքրությունը շար-
ժեց և նրանք հետևելով այդ սրինակին, սկսե-
ցին իրենց համար կոոպերատիվ խանութներ
բանալ:

Անգլիայի կոոպերատիվ շարժումն անցավ
յեվրոպական յերկրները, իսկ հետո և Ռուսաս-
տան:

Շուտով պարզվեց, վոր կոռպերացիայի գաղափարը կարելի չէ կիրառել վոչ միայն առևտրի, այլև ուրիշ ասպարեզներում: Խանութպանը ոգուտ ե ստանում վոչ միայն այն դեպքում, վոր իր խանութից ապրանք ե ծախում, այլև այն դեպքում, յերբ գյուղացուց գնում ե նրա տնտեսության մթերքները: Գերմանական գյուղացիները, հետևելով անգլիական բանվորների որինակին, կոռպերատիվ կազմակերպեցին, վորի նպատակն եր գյուղական մթերքների միատեղ վաճառահանումը, վորոնք մինչ այդ շատ չնչին գներով հավաքվում էին զանազան չարչիվաշխառու գնողների կողմից: Ահա այդպիսով սկսեցին զարգանալ մթերահավաք ընկերությունները—գյուղատնտեսական կոռպերացիայի առաջին ձևը:

Բացի խանութպանից և մասնավոր գնողներից գյուղում կա և պարագիտների մի այլ տեսակը, վորը վոչ պակաս վնաս ե հասցնում գյուղին—դա վաշխառուն ե: Այս դեպքում ևս ոգնություն ե հասնում կոռպերացիան:

Կոռպերատիվն իր անդամներից փոքրիկ փայավճարներ հավաքելով դրամագլուխ ե կազմում, վորի շնորհիվ և հնարավոր ե լինում ընկերություն կարիքավոր անդամներին փոխառություն տալ և այդ անել առանց քայքայե-

առ նրանց տնտեսությունը, նրանց ուժերից վեր սովորներ առնելով, ինչպես այդ վաշխառուն ե անում: Ահա, այսպիսով ե առաջ յեկել վարկային կոռպերացիան, վորը կարճ ժամանակամիջոցում ի մի յե համախմբել միլիոնավոր գյուղացիների, հավաքել ե զգալի միջոցներ, վորոնցով կարելի յե ոգնել վոչ թե մեկ, այլ բազմաթիվ տնտեսությունների:

Դրանից հետո սկսում են հանդես գալ կոռպերացիայի այլևայլ տեսակները: Այսպես, մի տեղում գյուղացիները միանում են յուզի գործարան կամ ջրաղաց կառուցելու համար: Մի այլ տեղում նրանք միանում են անտառային աշխատանքներ կատարելու, յերրորդում հողն ընդհանուր ուժերով մշակելու, կամ գյուղատնտեսական մեքենաներից ոգտվելու համար:

Ամեն տեղ հազարավոր կոռպերատիվ կազմակերպություններ են առաջ գալիս, վորոնք միմիայն բանվորների և գյուղացիների դրությունը բարելավելու նպատակներ են հետապնդում:

Բայց ինչպես կապիտալիստական յերկրներում, նույնպես և մեզ մոտ, մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը կոռպերացիան իր զարգացման ընթացքում մի շարք պակասավոր կողմեր ե ունեցել:

Ամենից առաջ կոռուպցիաների մեջ քիչ մարդիկ չկային, վոր կարծում ելին, թե իրենց կհաջողվի միմիայն կոռուպցիայի գարգացման ճանապարհով կապիտալիստական հասարակության բոլոր պակասները վերացնել և բանվորներին ու գյուղացիներին շահագործումից ազատել: Բայց իրոք, մինչև այն ժամանակ, քանի վոր գործարաններն ու գավոզները մնում էին բուրժուազիայի, իսկ հողը կալվածատերերի ձեռքում՝ բանվորների և գյուղացիների դրությունն արմատապես փոխելն անհնարին էր:

Այդպիսի կոռուպցիային յերազների վրասը կայանում էր նրանում, վոր նրանք ժողովրդին որորում էին անիրականալի հույսերով և թուլացնում էին հեղափոխական պայքարի դիմելու նրա պատրաստականությունը:

Բացի դրանից շուտով պարզվեց, վոր գյուղացիության այն մասը, վորն ամենից ավելի էր ճնշված—գյուղացիական չքավորությունը—կոռուպցիայից հետ եր մղվում վոչ միայն գյուղի ավելի ունևոր մասի, այլև կուլակների կողմից, վորոնք շուտով հասկացան ու գնահատեցին այն հանգամանքը, թե վորքան մեծ է կոռուպցիայի նշանակությունը և իրենց համար: Չքավորը հաճախ չէր ել կարողանում կոռուպցիայի փայտվածքը տալ: Նույնիսկ կոռուպ-

ցիայի անգամ լինելով, նա այնտեղ վոչ մի նշանակություն չունեիր: Չքավորը շատ քիչ բան էր գնում կոռուպցիայից, քիչ բան էր նրան (կոռուպցիային) վաճառում, կոռուպցիայի գործարանի աշխատանքից նա շատ քիչ էր կարողանում ոգտվել: Նա խնայած միջոցներ չունեիր, վոր կարողանար իբրև ավանդ մտցնել կոռուպցիայի դրամարկղը: Ուստի տարորինակ ել չէ, վոր այդպիսի պայմաններում ուժեղ և ունևոր գյուղացիները կոռուպցիայի տերերը դարձան:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ոգնեց վերացնելու կոռուպցիայի շարժման այդ թերությունները: Ամենից առաջ նա հողը գյուղացուն հանձնեց, իսկ գործարաններն ու գավոզները պետությանը և այսպիսով ժողովրդական տնտեսությունն ազատվեց ամենավտանգավոր թշնամիներից—կալվածատերերից ու խոշոր կապիտալիստներից:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կոռուպցիայի առաջ դրեց մի շարք նոր խնդիրներ, և նրան հնարավորություն տվեց այնպես ծավալել իր աշխատանքը, ինչպես վոր այդ հնարավոր չէր անել կապիտալիստական հասարակության պայմաններում: Առանձնապես խոշոր են գյուղական կոռուպցիայի առաջ դրված խնդիրները: Գյուղական կոռուպցիան տնտե-

սական աշխատանքի մեջ պետք է միացնել մի-
լիոնավոր միայնակ-գյուղացիներին և ոժտակի
գյուղական տնտեսութեան զարգացմանն ու բա-
րելավմանը:

Վորպեսզի ավելի պարզ լինեն այն խնդիր-
ները, վորոնք դրված են խորհրդային կոոպե-
րացիայի առաջ, մենք քննութեան կառնենք, թե
ինչ ձևերով է զարգանում ներկայիս կոոպերա-
տիվ շարժումը և ավելի մանրամասն կանգ կառ-
նենք գյուղատնտեսական կոոպերացիայի վրա,
վորի ուժեղացումը գյուղացիութեան լայն խա-
վերի համար ավելի քան կարևոր է:

Խորհրդային Միութեան մեջ կոոպերացիայի
ամենագլխավոր ու հիմնական տեսակներն են՝
սպառողական, գյուղատնտեսական և վարկային:

Այդ տեսակետից ամեն մեկն ունի իր ա-
ռանձնահատուկ նպատակներն ու խնդիրները:
Նրանցից ամեն մեկը զարգանում է յուրահա-
տուկ պայմաններում: Այդ պատճառով կոոպե-
րացիայի վերոհիշյալ տեսակներից ամեն մեկի
մասին կխոսենք առանձին-առանձին:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Սպառողական կոոպերացիայի գլխավոր
խնդիրը կայանում է նրանում, վոր կոոպերաց-

ման յենթարկված բնակչութեանը մատակարարել
էժան գնով և լավ վորակի առաջին անհրաժեշ-
տութեան կազմող ապրանքներ, վորպեսզի կո-
ոպերատիվ տնտեսները կարիք չունենան այդ
ապրանքները մասնավոր առևտրականներից գնե-
լու: Սպառողական կոոպերացիան — կոոպերատիվ
շարժման ամենահին ձևն է և խոշոր զարգաց-
ման է հասել, թե մեզ մոտ և թե ուրիշ յեր-
կրներում:

Նայած թե ինչ տարրեր է միացնում սպա-
ռողական բնկերութեանը — բանվորներին թե
գյուղացիներին — գոյութեան ունեն քաղաքային
(բանվորական) և գյուղական սպառողական կո-
ոպերացիա:

Սպառողական կոոպերատիվների ամբողջ
ցանցը միացած է մի մարմնի մեջ, վորը Միու-
թենական մասշտաբով կոչվում է «Յ ե ն տ ր ո-
ս ո յ ու զ», իսկ Հայաստանի մասշտաբով կոչ-
վում է «Հ ա յ կ ո ո ս»:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Ներկայումս գյուղացիութեան համար գյու-
ղատնտեսական կոոպերացիան ամենամեծ նշա-
նակութեանն ունի, քանի վոր գյուղատնտեսա-
կան կոոպերացիան աշակցութեան է ցույց տա-

լիս գյուղացիութեանն ամենալավ կերպով իր տնտեսութիւնը կազմակերպելու, ստացած մթերքները վերամշակելու և շահավետ կերպով նրանց վաճառելու գործում:

Իրարից բաժան-բաժան գյուղացիական տնտեսութիւնները կյանքի հրամայական պահանջով իրենց գործունեութեան զանազան անպարեզներում իրար են ձգտում, միասին աշխատանք կատարելու: Կարելի չէ ասել, Վոր գյուղացիական տնտեսութեան համար թե ամեն մի ճյուղը պահանջում է առանձին կոոպերատիվ կազմակերպութիւն:

Այդ պատճառով գյուղատնտեսական կոոպերացիան զարգանում է զանազան ձևերով: Գյուղատնտեսական կոոպերատիվների ամենամեծ մասը զբաղվում է գյուղական տնտեսութեան մթերքների վաճառահանման գործով: Այդ գյուղատնտեսական ընկերութիւններն ոգնում են գյուղացիութեանն ավելի շահավետ կերպով վաճառելու քաղաքի բնակչութեանն իր տնտեսութիւնից ստացված մթերքների ավելցուկը. որինսկ՝ պանիր, յուղ, գինի, պտուղներ և այլն:

Բայց վաճառահանման աշխատանքները շուտով կոոպերացիայի առաջն են դնում մթերքների վերամշակման հարցը, նրանց ավելի շահավետ ծախելու համար: Այդպես է որինսկ՝

Վաթի վաճառահանումը: Անաբատ կաթ կարելի չէ քաղաք բերել միմիայն մոտիկ վայրերից և այն ել քիչ քանակութեամբ: Վորպեսզի կաթի ավելի մեծ քանակութիւն հնամասիւր լինի վաճառքի հանել, անհրաժեշտ է այն վերամշակել՝ պանիր և յուղ պատրաստել: Նույնպիսի կարիք է զգացվում և գետնախնձորի վաճառահանման ժամանակ, Վորն ավելի ոգուտ կտա, յեթե կըրախմալ (ոսլա) պատրաստվի, իսկ պտուղները և բանջարեղեններն ավելի ձեռնտու յէ չորացնել կամ կոնսերվ պատրաստել:

Այսպիսով առաջ են գալիս այնպիսի գյուղատնտեսական կոոպերատիվներ, Վորոնց նպատակն է լինում գյուղական տնտեսութեան մթերքների վերամշակումը:

Ժամանակի ընթացքում գյուղատնտեսական կոոպերացիան առաջադրում է և այլ խնդիրներ. Վորպեսզի գյուղական տնտեսութեան յեկամուտն ավելանա, բավական չի լինում միայն մթերքները շահավետ կերպով ծախել, կամ այն վերամշակել, այլ անհրաժեշտ է դառնում ձեռք առնել այնպիսի միջոցներ, Վորով հնարավոր լինի տնտեսութեան վարելու ձևերը լավացնել, նրա բերքատուութիւնը բարձրացնել: Դա հնարավոր է, գյուղացիութեանը գյուղատնտեսական մեքենաներ, պարարտանյութեր, լավ տեսակի

սերմեր և բուժելու նյութեր մատակարարելու ղեկավարում:

Այս վերջինը յերկու ձևով է կատարվում— կամ գյուղացիությանը ծախում են կոոպերատիվի պահեստներից նրան հարկավոր մեքենաներ, սերմեր և պարարտանյութեր, կամ կազմակերպում են հատուկ ընկերություններ, վորոնց անդամները միասին ձեռք են բերում և միասին ոգտվում են այնպիսի մեքենաներով, վորոնց գներն առանձին անտեսությունների ուժերից վեր է—ինչպես որինակ՝ տրակտոր, կալսուղ մեքենա, սերմագտիչ մեքենա և այլն: Այլ խոսքով կան կոոպերատիվներ, վորոնք կազմակերպվում են և միացնում գյուղացիներին վոչ թե միասին վաճառքի հանելու, վերամշակելու և անդամներին ապրանք մատակարարելու նպատակով, այլ միասին մի վորևե արտադրական աշխատանք կատարելու համար: Ներկայումս Խորհրդային Միության մեջ առանձնապես զարգանում են գյուղատնտեսական արտեղները, վորոնք ի մի յեն համախմբում վորոշ գյուղացիական անտեսությունների ամբողջ արտադրողական աշխատանքը: Այդպիսի արտեղներում արտելի անդամների ամբողջ հողը, կենդանի և մեռյալ խնկենտարն ընդհանուրի արամադրության տակ են գտնվում, իսկ արտելի աշխա-

տանքի արդյունքը բաժանվում է արտելի անդամների միջև նախորդ սահմանված ձևով: Այդ արտեղները կոչվում են կոմունաներ, կամ կոլլեկտիվ անտեսություններ և առանձնահատուկ ուշադրության են արժանի, վորպես անտեսությունը կոլլեկտիվային հիմունքներով կազմակերպելու առաջին փորձ:

Բացի գյուղատնտեսական կոոպերացիայի վերև մատնանշած տեսակներից, գյուղացիությունը կազմակերպվում է և ուրիշ հատուկ նպատակների համար: Այսպես, որինակ, կան կոնտրոլ ընկերություններ, վորոնց նպատակն է անասունների խնամքը լավացնելու, նրանց ցեղը ազնվացնելու և կաթնատվությունն ավելացնելու և այլն: Սերմացման ընկերությունները բարձր հատկության սերմեր արտադրելու, ձիաբուծական ընկերությունները ձիերի վորակը բարձրացնելու համար և այլն:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր գյուղական անտեսության ամենաբազմազան կարիքներն անգամ կարելի յե հոգալ գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Գյուղատնտեսական կոոպերացիայի ամենակարևոր տեսակներից մեկն է համարվում

1003
13327

վարկային ընկերութիւնը: Հարցը նրանումն է, վոր գյուղացիութիւնը հաճախ միջոցների պակասութիւնն է զգում իր տնտեսութիւնը բարելավելու — գյուղատնտեսական մեքենաներ, սերմորայք, պարարտանյութեր, լծկաններ, այգին մշակելու և այլն: Առանձնապես դժվար դրութեան մեջ է գտնվում գյուղի չքավորութիւնը, վորի ուժերից վեր է տնտեսութեան բարելավման համար ծախսեր անելը:

Չքավորը հաճախ սերմ անգամ չի ունենում իր արտը ցանելու համար: Կարող է նա, արդոք, այդպիսի դրութեան մեջ լինելով մտածել լավ ինվենտար, կամ իրեն անհրաժեշտ յեզ, կով գնելու մասին: Ահա այս դեպքումն է, վոր նրան ոգնութեան պետք է հասնի վարկային կոոպերացիան:

Վարկային կոոպերացիայի գլխավոր նպատակն այն է, վոր կարիք ունեցող տնտեսութեանը չնչին տոկոսով փոխառութիւն տա, վորի միջոցով հնարավոր լինի ձեռք բերել այն, ինչ բանի կարիք վոր ունի տնտեսութիւնը:

Բայց վորտեղից է ստանում վարկային ընկերութիւնն այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցները:

Այդ միջոցները ստացվում են յերկու աղբյուրից՝ մի կողմից գործի սկզբնական շրջանում

գործի համար անհրաժեշտ գումարները պետութիւնն է տրամադրում: Սակայն միջոցներ ստանալու եղական աղբյուրը հենց ինքը կոոպերացված գյուղացիութիւնն է:

Ընկերութեան ամեն մի անդամը կոպերատիվ է մուծում վորոշ փայլվածք և մուտքի վճար և հետո իբրև ավանդ կոպերատիվին պահ է տալիս այն դրամական միջոցները, վորոնք տնտեսութեան մեջ ժամանակավորապես ազատ են լինում: Թե վորքան խոշոր էյին լինում փայտեքերից հավաքած այդ գումարներն ակնհայտ կաքելի յե տեսնել այն հանգամանքից, վոր վարկային կոոպերացիան Ռուսաստանում մինչ պատերազմայն: Ժամանակները սեփական միջոցներ ունեն 140 միլիոն ուրբլի, իսկ ավանդներ մինչև 600 միլիոն ուրբլի:

Ներկայումս վարկային կոոպերացիան վերականգնվում է: Խորհրդային իշխանութիւնը վարկային կոոպերացիային ոժանդակելու համար հատկացրել է մոտ 200 միլիոն ուրբլի:

Վարկային ընկերութիւնները փայլվածքների միջոցով բավականին խոշոր դրամագլուխ են հավաքել և ամեն կերպ աշխատում են զարգացնել ավանդների ընդունելութեան գործողութիւնները: Կասկած չկա այն մասին, վոր գյուղացիութեան կյանքի բարելավման և գյուղա-

անտեսութեան յեկամուտի ավելացման հետ միասին գյուղում ավելանում են նաև դրամական ազատ միջոցները, վորոնք հոսելու յեն դեպք վարկային ընկերութիւնների դրամարկղների:

Այդ հանգամանքը հնեւավորութիւն կտա վարկային կոոպերացիային վարկավորելու թե ընկերութեան անհատ անդամներին և թե նրան անդամագրված գյուղատնտեսական կոոպերատիւներին ձեռք բերելու մեքենաներ, գյուղգործիքներ, սերմորայք, անասուններ և այլն:

ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՈՒՅԺԸ

Ինչի վրա յե հիմնված կոոպերացիայի ույժը: Մենք արդեն ասացինք, վոր մեր գյուղերի և ավանների մեծ մասի մեջ կոոպերատիւներ կան: Բայց բոլոր կոոպերատիւները միատեսակ զգալի ոգուտ չեն տալիս գյուղացիութեանը: Նրանք բոլորը չեն վոր իրոք ոգնում են գյուղացիութեանը լավացնելու նրա անտեսութիւնն ու բարձրացնելու յեկամուտը: Այլ խոսքով կան մի շարք վատ կոոպերատիւներ, վորոնցից գյուղացիութիւնը ոգուտ չի տեսնում: Միևնույն ժամանակ կան և այնպիսի կոոպերատիւներ, վորոնք իրական կյանքում ապացուցել են, թե կոոպերացիայի միջոցով վորքան ոգտակար և կա-

ղևոր բաների կարելի յե հասնել: Վորպեսզի պարզենք, թե ինչու՞ն ե կայանում կոոպերացիայի ույժը, մենք պետք ե քննենք թե լավ և թե վատ կոոպերատիւները, իրար հետ համեմատենք և այն ժամանակ մեզ համար միանգամայն պարզ կլինի, թե ինչ ե հարկավոր, վորպեսզի կոոպերացիան իսկապես ոգուտ բերի:

ԼԱՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ

Այժմ մենք դիտենք լավ հիմքերի վրա դրված կաթնատնտեսական արտելի աշխատանքը: Լավ արտելն ունի լավ սարքավորված յուղապանրագործարան, վորը լավ վորակի և բարձր արեսակի պանիր և յուղ ե պատրաստում: Ինչ կերպով ե արտելն իր գործարանը լավ հիմքերի վրա դրել: Նա (արտելը) ամենից առաջ վորոշ գումար ե հավաքել գործարան կառուցելու համար: Արտելի անդամները ակտիվ մասնակցութիւն են ունեցել գործարանի աշխատանքի մեջ, փայտ ու քար են կրել հողուցեսի աշխատանքներն իրենք են կատարել: Հետո նրանք վարկային ընկերութիւնից ձեռք են բերել աշխատանքների համար դրամական այն գումարը, վորը իրենք տալ չեյին կարող: Վարպետի աշխատանքներին հսկում ե վարչութիւնը, վորը վարպե-

տից պահանջում ե լավ մթերք պատրաստել և աշխատանքի ուղիղ հաշվետուում կատարել, վորպեսզի ճիշտ կերպով իմանան, թե վորքան փութ կաթից ինչքան պանիր կամ յուղ ե դուրս գալիս: Իսկ ստացված յուղի և պանրի քանակն ու վորակը կախված ե նրանից թե վերամշակման յենթակա կաթը վորքան լավն ե յեղել: Այդ պատճառով արտելը կաթի ընդունելությունը կատարել ե համաձայն նրա մեջ պարունակող յուղի տոկոսին՝ ուստի ով վոր ավելի յուղալի կաթ բերի, նա ել ավելի լավ վճար կստանա: Կեղծված կաթը գործարանը բոլորովին չի յնդունում: Բայց գործարանը լավ վարպետով և լավ վորակի կաթով ապահովելը դեռ ես քիչ ե: Պետք ե միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բավականաչափ կաթ բերվի, վորպեսզի գործարանը լրիվ չափով աշխատի, այլ վոչ թե մի որ աշխատի, իսկ մյուս որը կաթի պակասության պատճառով պարապ մնա: Դրա համար արտելի բոլոր անդամները համաձայնվել են իրենց տնտեսության մեջ յեղած կաթի բոլոր ավելցուկը գործարանին հանձնելու, բացի այդ իրենց արտելի վոչ անդամ համագյուղացիների շրջանում հարեան գյուղերում ագիտացիա մղել, վորպեսզի ամենքը իրենց կաթի ավելցուկը գործարան տանեն: Այդ ագիտացիան հեշտանում ե շնոր-

հիվ այն հանգամանքի, վոր ղժվար չի լինում համոզել ամեն մի գյուղացու, թե ինչպիսի ոգուտ ե բերում կոոպերատիվ գործարանում կաթի վերամշակումը:

Այսպիսով կաթը սկսել են տանել բոլոր տնտեսություններից: Բայց իրենց անդամների համար կաթի մի քիչ ավելի ձեռնտու գին են սահմանել: Բացի այդ, արտելն իր պանիրն ու յուղը հանձնելով իր միությանը կոմիսիոն սկզբունքով ծախելու համար, դրանից ստացած ոգուտի զգալի մասը բաժանում եր կաթ բերող իր անդամների միջև, ըստ վորում ով վոր ավելի շատ կաթ ե հանձնել, կամ վորի կաթը ավելի լավ վորակի յե յեղել, նա ել պրեմիա յե ստացել: Այս միջոցով արտելը համոզում ե բոլորին, վոր ձեռնտու յե վոչ միայն գործարանին կաթ հանձնելը, այլ և շահավետ ե արտելի անդամ լինելը: Իսկ արտելի մուտքը ազատ ե բոլոր նրանց համար, ովքեր վոր խորհրդային Հանրապետության թշնամի չեն: Ամեն մի նոր ընդունվող անդամից արտելն ստանում ե փայավճար, մուտքի վճար և այդպիսով ավելացում ե իր սեփական դրամագլուխը: Թե այդ վորքան կարևոր ե կոոպերատիվի համար, մենք ցույց կտանք քիչ հետո:

Այժմ կրկին դառնանք մեր արտելին: Վոր-

պեսզի իրենց գործարանը լրիվ բեռնավորում ունենա, հարկավոր է հոգ տանել վոչ միայն այն մասին, վորպեսզի կաթ բերողները և արտելի անդամների թիվն ավելանա, այլ անհրաժեշտ է մտածել նաև այն մասին, վոչ արտելին պատկանող ամեն մի կովը, իր կաթի քանակն ավելացնի, կաթ ավելի շատ տա: Այդ իսկ նպատակով արտելին կից կազմակերպել են կոնտրոլ Միություն, հրավիրել են կոնտրոլ-ասիստենտ (հրահանգիչ) գյուղացիներին սովորեցնելու համար, թե ինչպես պետք է կերակրել և պահել անասունը, ինչպես հսկել և խնամել նրան: Կոնտրոլ-ասիստենտի խորհրդով անասուններին սկսել են կերակրել քուսպով և թեփով, անասուններին սկսել են ավելի լավ խնամել և այդ բոլորի հետևանքով կովերի կաթնատվությունն ավելացել է և գործարանի յեկամուտը բարձրացել: Կաթնատնտեսության բարելավման հոգսը դրդել է արտելին կազմակերպել բեղմնավորման կայան, նրա համար ազնվացեղ ցուլեր ձեռք բերելով:

Կատարելով իր աշխատանքը, արտելի վարչությունը, կարիք յեղած դեպքում հրավիրել է անդամների ընդհանուր ժողով և այդ ժողովներում իր կատարած աշխատանքների մասին հաշվետու զեկուցումներ ե տվել և կազմել են ա-

պագա աշխատանքների համար ծրագիր: Այսպիսով կենդանի կապ է պահպանվել արտելի և անդամների միջև և վարչության աշխատանքը միշտ արտելի անդամների հսկողության տակ է յեղել:

Իսկ այժմ տեսնենք թե, սովորաբար, ինչպես են ընթանում գործերը վատ ընկերության մեջ:

ՎԱՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին նշանը, վորի հիման վրա լավ արտելը կարելի է զանազանել վատ ընկերությունից, այդ այն է, վոր ընկերության վարչությունը դեռ չի վորոշել, թե նրա կարևոր աշխատանքը գյուղական տնտեսության գլխավորապես վոր մասը պետք է ընդգրկի:

Այդպիսի ընկերության վարչությունը, սովորաբար իր գործունեությունը սկսում է առևտրից, ըստ վորում առևտուրը անում է առանց վորև է ծրագրի և սխտեմի, գնում է, ինչ վոր պատահում է: Այդպիսի ընկերության մեջ ապրանքների ընտրությունը պատահական բնույթ է կրում: Իր գնումներն ընկերությունը կատարում է վորտեղ վոր պատահում է, նա գեմ էլ չի մասնավոր շուկայի հետ սերտ կապ պահպանելու:

Մեծ մասամբ մի վորոշ ժամանակ առևտրով զբաղվելուց հետո ընկերությունը ծանր դրության մեջ է ընկնում: Դուրս է գալիս, վոր կամ ապրանքը թանգ է գնված և նա պառկած մնում է, չի վաճառվում, կամ ապրանքը վատ վորակից է, կամ թե գնել են վոչ թե այն ապրանքը, վորը գյուղում անհրաժեշտ է, այլ այն ինչ վորը ընկերության վզին են փաթաթել:

Այդպիսի ընկերության անդամների հետաքրքրությունը դեպի ընկերության աշխատանքները ընկնում է: Վարչությունը բոլոր գործերը տանում է ինքնագլուխ կերպով: Ընկերության շարքային անդամները, նույն իսկ նրանք, վորոնք խանութի գնորդների թվին են պատկանում, ընկերության գործերի վրա վոչ մի ազդեցություն չեն ունենում: Ընկերության ընդհանուր ժողովները գումարվում են շատ քիչ, վերահսկիչ հանձնաժողովը վոչ մի հսկողություն չի կատարում:

Հաճախ պատահում են և ավելի վատ գործեր: Մի վորև է գործարար, նախկին վաճառական, ներս է սողոսկում վարչության մեջ, վարչության նախագահի կամ անդամի պաշտոնով և գործում է ընկերության մեջ, վորպես մի մասնավոր խանութում: Ապրանքների վրա մեծ իրադիրներ են անում, ավելորդ ծախսեր անե-

լուց չի քաշվում և իր անձնական շահն էլ չի մոռանում:

Այդպիսի ընկերությունը չի սիրում ունենալ լավ և ճշգրիտ հաշվապահություն: Յեթե Միությունից հրահանգիչ գա, նա հեշտ կերպով ընկերության գործերից գլուխ չի հանի, հեշտ կերպով նա չի կարող ընկերության իսկական դրությունը պարզել:

Արտադրողական կամ ագրիկուլտուր աշխատանքներ ընկերությունը չի տանում, բեղմնավորման կամ վարձու կայան չի ունենում:

ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ԼԱՎ ՅԵՎ ՎԱՏ ԸՆԿԵՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Լավ և վատ ընկերությունների վերև բերված համեմատությունից մենք կարող ենք վորոշել, թե ինչով է մեկը մյուսից տարբերվում: Լավ ընկերությունը կամ արտելը ամենից առաջ ընտրում է այն հիմնական աշխատանքը, վոր նրա շրջանի գյուղական տնտեսության համար ամենամեծ նշանակությունն ունի, որին կախնատն, այգեգործական, բամբակագործական, մեղվաբուծական, շերամապահության և այլն: Վատ ընկերությունն այդպիսի հիմնական աշխատանք չունի կամ զբաղվում է նրանով ի-

միջի ալոց, առանց կարևոր նշանակութիւն տալու նրան:

Լավ ընկերութիւնն իր աշխատանքն այնպէս ե կազմակերպում, վորպէսզի ոժանդակի գլուղական տնտեսութեան բարելավման վերելքին, նրա զարգացմանն ու բարգաւաճմանը:

Այդ իսկ պատճառով լավ ընկերութիւնն իր անդամներին մատակարարում ե պարարտանյութեր, գլուղատնտեսական մեքենաներ, բարձր վորակի սերմեր, կազմակերպում ե բեղմնավորման կայան, վարձու կայան: Նա կազմակերպում ե նաև իր անդամների գլուղատնտեսական միջոցների վերամշակումն ու արտահանումը:

Վատ ընկերութիւնն առևտուր ե անում այնպիսի ապրանքներով, վորոնք նրան ավելի շահավետ են թվում, շատ քիչ ե մտածում գլուղական տնտեսութեան շահի մասին: Լավ ընկերութիւնն իր աշխատանքի ընթացքում աշխատում ե իր բոլոր անդամների հետ կենդանի կապ պահպանել, նրանց աշխատանքի մեջ զբաղել, շահագրգռում ե ամեն մի տնտեսութեանը՝ ընդհանուր գործի մեջ ուղղակի մասնակից դարձնելու նրան: Վատ ընկերութիւնը գտնվում ե միայն վարչութեան ձեռքում, շարքային անդամների հետ կապը կտրում ե և բոլորովին հոգ

չի տանում իր անդամներին ընկերութեան գործերով հետաքրքրելու:

Լավ ընկերութիւնը շատ հաճախ անդամներ ընդհանուր ժողովներ ե գումարում, նրանց ծանոթացնում իր աշխատանքների հետ, ինկատի յե առնում այն գործնական տեղին նկատողութիւնները, վորոնք արվում են ընդհանուր ժողովի կողմից:

Վատ ընկերութիւնն ընդհանուր ժողով ե հրավիրում միայն ծայր աստիճան անհրաժեշտութեան դեպքում: Լավ ընկերութիւնն իր հաշվապահութիւնն ուղիղ ե տանում, իր գործերն ու հաշվետվութիւնները ժամանակին ներկայացնում ե վերահսկիչ հանձնաժողովին և ամեն ամիս միութիւն ե ուղարկում իր հաշվեկշիռը:

Վատ ընկերութիւնը գրեթե տանում ե անկանոն, աշխատում ե, վորքան կարելի յե վերահսկիչ հանձնաժողովին քիչ հանդիպել և շրջանային միութեան հետ ել ըստ հնարավորութեան քիչ գործ ունենալ:

Վերջապէս լավ ընկերութիւնն իր ուժերի և հնարավորութիւնների համեմատ զբաղվում ե ագրիկուլտուր և կուլտուրական գործունեութեամբ, շրջանային գլուղատնտեսների և անասնաբուժերի հետ գործնական կապ ե պահպա-

հում, թերթեր ե դուրս գրում, հետաքրքրվում
ե խրճիթ-ընթերցարաններով:

Վատ ընկերությունը դեպի այդ բոլորը վոչ
մի հետաքրքրություն ցույց չի տալիս:

ԻՆՉՈՎ Ե ԲԱՑԱՏՐՎՈՒՄ ԼԱՎ ՅԵՎ ՎԱՏ ԸՆԿԵՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅՂ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ համար չափազանց կարևոր ե պար-
զել այն հարցը, թե ինչպես ե պատահում, վոր
իրարից վոչ հեռու գոյություն են ունենում
միմիանցից այնքան տարբեր յերկու կազմա-
կերպություններ: Հեշտ չի լինի ասել, թե այդ
տարբերության միակ պատճառը նրանումն ե,
վոր ընկերության վարչությունը լավ կամ վատ
ե լինում: Ի հարկե յուրաքանչյուր կոոպերա-
տիվի համար չափազանց կարևոր ե լավ վար-
չություն ունենալ, վորովհետեւ վատ վարչու-
թյունը նույնիսկ ամենալավ կոոպերատիվի
գործերը կարող ե քայքայել ե չի կարող աշխա-
տանքները ճիշտ կերպով տանել: Բայց այդ
միայն հին ժամանակներն եյին մտածում, թե՝
«ինչպես տերտերն ե, այնպես ել ծուխն ե»:

Լավ կոոպերատիվը վաս կոոպերատիվից
գանազանող գլխավոր պատճառը նրանումն ե,
թե վորքան գիտակից յեվ ակտիվ են կոոպերա-

տիվի անդամներ, վորքան շատ են նրանք հե-
տաքրքրվում կոոպերատիվ գործերով, ինչպես
են նրանք հսկողություն ունենում կոոպերատի-
վի գործերի վրա, վորքան են նրանք հայտնա-
բերում իրենց ինքնագործունեությունը: Մենք
արդեն գիտենք, վոր կոոպերատիվի եությունը
նրա անդամների միատեղ գործունեության մեջ
ե կայանում: Այնտեղ, ուր միատեղ գործունե-
ություն չկա, վորի մեջ մասնակցելին վոչ մի-
այն վարչության անդամները, այլև ընկերու-
թյան բոլոր անդամները, այնտեղ իսկական կո-
ոպերացիա չկա: Այնտեղ, ուր կոոպերատիվի
անդամները գիտակից են, վորտեղ նրանք մաս-
նակցում են կոոպերատիվի աշխատանքներին—
այնտեղ վատ վարչություն չի կարող լինել:
Յեթե նույնիսկ մի վորեւ անհարազատ տարր
ներս ե մտել վարչության մեջ, նրան շատ շու-
տով այնտեղից դուրս կվճռվեն: Յեթե վար-
չությունն աշխատանքի սխալ գիծ վերցնել, իս-
կույն նրան իր սխալը ցույց կտային:

Միևնույն ժամանակ նույնիսկ կոոպերա-
տիվի ամենալավ վարչությունն անգամ չի կա-
րող լավ աշխատանք տանել, յեթե նրան չի ու-
նում ամբողջ կոոպերացված բնակչությունը:

Ինչ արժեք կարող ե ունենալ նույնիսկ
յուրի գործարանը, յեթե գյուղացիները նրան

կաթ չտան: Ինչպես կարող ե կոոպերատիվը հայթայթման աշխատանք կատարել, յեթե նրա անդամներն իրենց մթերքները վաճառեյին մասնավոր շուկայում: Ինչպես կարող ե կոոպերատիվն իրեն համար զրամագլուխ ստեղծել, յեթե նրա անդամները կոոպերատիվ չմուծեն իրենց փայտվճարները և իրենց ավելացած փողն այնտեղ ավանդ չմտցնեն, պահ չտան:

Այստեղից պարզ ե, վոր գործի ամբողջ եյությունը նրանումն ե, թե նրա շարքային անդամները վորքան են հասկանում իրենց նշանակությունը կոոպերացիայի համար, վորքան ակտիվ կերպով են արտահայտում իրենց ինքնագործունեությունը:

Այդ իսկ պատճառով կոոպերատիվի ամեն մի անդամն ամենից առաջ պետք ե իրեն համար պարզի, թե նա ի՞նչ պարտականություններ ունի կոոպերատիվի առաջ և կոոպերատիվի վերաբերյալ ինչպիսի՞ իրավունքներ ե նա վայելում:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն մի անհատ, վորն ուզում ե կոոպերատիվին անդամագրվել, պետք ե առաջուց վորոշի իր ամբողջ տնտեսությունը վարել այն-

պես, վոր կոոպերատիվի ոժանդակությանը դիմի այն բոլոր ղեպքերում, յերբ այդ հնարավոր ե լինում, ձգտելով իր բոլոր կարիքները կոոպերատիվի միջոցով բավարարել: Այսպես, որինակ յեթե իր մթերքները (պանիր, յուղ, խաղող և այլն) վաճառահանում ե կոոպերատիվի միջոցով, ապա նա պետք ե ընկերության միջոցով դնի նաև մեքենաներ, պարարտանյութեր և այլն:

Ամեն մեկը, վոր անդամագրվում ե կոոպերատիվին, չպետք ե մտածի, թե կոոպերատիվն առանց իր ակտիվ մասնակցության ինքն իրան կսկսի ուղիղ աշխատել: Ամենից առաջ նա իր հույսը պետք ե դնի ընդհանուր գործի մեջ իր ունենալիք սեփական մասնակցության վրա, կոոպերատիվի վրա նա պետք ե նախ, վորպես իր սեփական գործի վրա: Այս ամբողջ ընդհանուր գործի մեջ նա պետք ե պատրաստ լինի մասնակցելու անձնական միջոցներով և անձնական աշխատանքով:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՔ Ե ՓԱՅՎԱԶԱՐ ՄՏՅՈՒ

Կոոպերատիվի ամեն մի անդամի վրա ամենից առաջ փայտվճար մտցնելու պարտականությունն ե ընկնում, այն ե՝ իր անձնական մի-

Նոցներէց մի փոքրիկ մաս ե հանում ընդհանուր գործի համար:

Մենք արդեն վերելը մասնանշեցինք, վոր կոոպերացիան աճել ե այն կոպէկներով, վոր անգլիական բանվորները հավաքեցին: Յեւ մենքի համար պետք ե պարզ լինի, վոր սեփական միջոցներ չունենալու դեպքում. կոոպերատիվը չի կարող իր աշխատանքը տանել, նույնիսկ մեր ոքերում, յերբ Խորհրդային իշխանութիւնն ամեն բանում ընդառնում ե կոոպերացիային, նրան ոգնութիւն ե պաշտպանութիւն ե ցույց տալիս:

Ամեն մի անտեսաւարական աշխատանք շրջանառութեան միջոցներ ե պահանջում: Յեթե այդ սպառողական ընկերութիւն ե — ապա հարկավոր են միջոցներ ապրանքներ գնելու համար: Գործը տանել միմիայն վարկի շնորհիվ անհնար ե: Յեթե վարկային ընկերութիւն ե, նրան հարկավոր են սեփական միջոցներ, վորպէսզի նա կարողանա կարիքավորներին վարկ տալ: Յեթե գյուղատնտեսական կոոպերատիվ ե — ապա նրան պետք են միջոցներ հայթայթման աշխատանք կատարելու համար: Պետք ե հաշիւ առնել ե այն հանգամանքը, վոր կոոպերատիվին բաց թողնվելիք վարկի քանակը կախված ե կոոպերատիվի սեփական միջոցների չա-

փից: Վարքան վոր շատ սեփական միջոցներ ունի կոոպերատիվը, այնքան ել ավելի ապահով ե լինում նրա գոյութիւնը, այնքան ել նա կարող ե ավելի աշխատանք կատարել, այնքան ել նա ավելի չափով ուրիշների մոտ վստահութիւն ե վայելում: Ամեն մի բանկում, ամեն մի պետական հիմնարկութեան մեջ այս կամ այն կոոպերատիվին վարկ տալու հարցը վորոշելու ժամանակ ամենից առաջ հետաքրքրվում են, թե վորքան սեփական միջոցներ ունի այդ կոոպերատիվը:

Ահա թե ինչու կոոպերատիվի ամեն մի անդամ պետք ե իր բաժինը մտցնի ընկերութեան ընդհանուր դրամազուլի կազմելու համար, պիտի մասնակցի իր կոոպերատիվի սկզբնական ամրացման գործում:

Այն դեպքերում, յերբ հնարավորութիւն չկա անդամավճարը լրիվ կերպով մուծելու, այդ վճարումները պետք ե մաս-մաս կատարել, քայց միայն ճշտապահ ե կանոնավոր կերպով ու ամեն կերպ պետք ե ձգտել, վորքան վոր հնարավոր ե շուտ մարել այդ պարտքը:

Միայն այն շոպեյից, յերբ կոոպերատիվի անդամն իր լրիվ կամ մասնակի փայտվճարը մտցնում ե կոոպերատիվի դրամարկը, կարելի

յե նրա անդամակցական զբուծյունը կոողերատիվում ձևակերպված համարել:

Կոողերատիվի ամեն մի անդամ նյութական պատասխանատվություն է կրում իր կողակերատիվի համար, բայց փայտվճարի և մուտքի մուծումով չի սահմանափակվում կողակերատիվի գործերի մեջ անձնական միջոցներով ունենալիք մասնակցությունը: Կողակերատիվի կանոնադրության համաձայն ամեն մի անդամ իր վրա յե վերցնում և լրացուցիչ պատասխանատվություն իր կողակերատիվի հանդեպ: Այսպես, որինակ՝ մացներով 100 ռ. փայտվճար, կողակերատիվի յուրաքանչյուր անդամ պետք է զբաղվոր պարտավորություն տա այն մասին, վոր նա կողակերատիվի պարտավորությունների դիմաց պատասխանատու յե իր մացրած փայտվճարի հնգապատիկ կամ տասնապատիկ չափով: Կամ ուրիշ խոսքով նա իր վրա 50 կամ 100 ռ. լրացուցիչ պատասխանատվություն է վերցնում: Կողակերատիվի անդամների լրացուցիչ պատասխանատվությունը մացրված է կանոնադրությամբ, զլխավորապես այն պատճառով, վոր արդեն նախորոք հայտնի յե, վոր կողակերատիվի համար անհնար է աշխատանք տանել բացառապես իր սեփական միջոցներով, առանց վարկի: Ուստի, վորակեսզի ապահովեն այդ վար-

կը, վորակեսզի իրենց վարկ տվողների վստահությունը գրավեն, այդ պատճառով և մացրված է լրացուցիչ պարտավորությունը: Այսպես, որինակ՝ յեթե յնկերությունն ունի 100 անդամ, վորոնք մացրել են 10-ական ուրբի փայտվճար, ապա այդ հնարավորություն է տալիս հավաքելու միայն 1000 ուրբի: Այդ գումարով շատ բան չի կարելի անել: Այն ընկերությունը, վորը հավաքել է 1000 ռ. փայտվճար և անդամների տասնապատիկ պատասխանատվություն է սահմանել, կարող է 10.000 ռ. վարկ ունենալ: Այդպիսի մի գումար հնարավորություն է տալիս ավելի լայն ծավալով աշխատանք տանել: Բայց հաճախ լինում են դեպքեր, վոր նույնիսկ հիշյալ գումարի վարկն անգամ չի բավարարում կողակերատիվի բոլոր պահանջները նրա շրջանառության ընթացքում: Այդ զբուծյունից գուրս գալու համար, շատ կողակերատիվ կադմակերպություններ ունեն ևս մի միջոց, վորը հայտնի յե կողակերատիվ վաճառահանման սկզբունքներ անվան տակ: Կողակերացիայի յուրաքանչյուր անդամ պետք է պարզ իմանա, թե ինչումն են կողակերատիվ վաճառահանման այդ սկզբունքները և ինչ նշանակություն ունեն նրանք:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱ- ՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի յե, վոր մասնավոր կապիտալի վաճառահանման գործում կատարելիք առևտրական աշխատանքը կառուցված ե պարզ սկզբունքներէ վրա: Մասնավոր գնողը գյուղացիներէ առնում ե մթերքներ և վճարում ե կանխիկ դրամ կամ նրա դիմաց ապրանքներ ե տալիս: Շատ հազվագյուտ են այնպիսի դեպքեր, յերբ մասնավոր գնողը գյուղացուց ապառիկ մթերքներ ե վերցնում: Ընդհակառակը, քիչ չեն և այնպիսի դեպքեր, յերբ մասնավոր գնողը վարկավորում ե գյուղացուն՝ բերքը գնում ե դեռ չքաղված ժամանակ, նրա դիմաց տալով փոքր չափով կանխավճարներ: Դրամական միջոցների կարիք ունեցող գյուղացուն հաճախ գայթակղեցնում ե կանխիկ դրամով կատարվող վաճառքը կամ կանխավճար ստանալը: Սակայն այդ դեպքերում գյուղացին իրեն հաշիվ չի տալիս, վոր մասնավոր գնողի այդորինակ «բարի» վարմունքն իրեն շատ թանկ ե նստում: Ձի կարելի և վոչ մի բուսե մոռացութեան տալ այն հանգամանքը, վոր մասնավոր կապիտալը միայն մի նպատակ ունի՝ վորքան հնարավոր ե շատ ոգուտ ստանալ: Ամեն մի մասնավոր գնող այդ շահն անպայման

ստանում ե, դրա համար նա դիմում ե ամեն տեսակ միջոցների: Յեթե հարկավոր ե նա չափը պակաս ե տալիս, կամ կշռելիս խաբում ե, կամ վաշխառուական տոկոսներ ե վերցնում և ամեն կերպ աշխատում ե մթերքների գինը գրցել: Մասնավոր կապիտալի հետ պայքարելը հեշտ չե: Կոոպերացիայի համար այդ պայքարում ունեցած գլխավոր դժվարութիւնը կայանում ե նրանում, վոր կոոպերացիան բավականաչափ սեփական միջոցներ չունի և հնարավոր չի լինում ամեն ժամանակ անհրաժեշտ վարկը գտնել: Ահա այստեղ ե, վոր կոոպերացիային պետք ոգնութեան հասնի կոոպերատիվ վաճառահանումը: Կոոպերատիվ վաճառահանման ելութիւնը նրանումն ե կայանում, վոր կոոպերատիվի ամեն մի անդամ, իր տնտեսութեան մթերքի վաճառումը հանձնարարում ե կոոպերատիվին, ըստ վորում այդ մթերքի համար ըստացվելիք ամբողջ գումարը նա ժամանակավորապես կոոպերատիվից չի պահանջում: Լքիվ հաշիվ ե կատարվում միայն այն ժամանակ, յերբ կոոպերատիվի կողմից մթերքը վաճառվում ե, բայց դրա փոխարեն ստացած շահի մեծ մասը գնում ե այն գյուղացու ոգտին, վորը վաճառելու համար մթերք ե տվել: Այդ ձևով շատ տեղերում հնարավոր ե յեղել կազմակերպել կո-

ոպերատիվ վաճառք, որինակ՝ պանրի, յուղի, գինու և այլն: Այսպես՝ կովատերը, վոր ցանկանում է իր կովը ծախել, նրան հանձնում է կոոպերատիվին այն պայմանով, վոր կովը ծախի վոչ թե գյուղում, վորտեղ առհասարակ անասունի գինը շատ եժան է, այլ քաղաքում, ուր ավելի բարձր և ձեռնտու գնով կարելի չէ ծախել: Այս ձևով բազմաթիվ վայրերում կազմակերպվում են պանրի, յուղի, մսի և այլ մթերքների վաճառքը: Այդ տեսակի վաճառքի նշանակութունը կայանում է նրանում, վոր գյուղացին մասնավոր գնողի ճանկը չի ընկնում և ստանում է իր մթերքի լրիվ արժեքը:

Կոոպերատիվը հնարավորութուն ունի իր առևտրական աշխատանքը տանել, առանց իր տրամադրության տակ մեծ միջոցներ ունենալու. նրան այդ բանում ոգնում են փայտերեքի վստահությունն ու բանկից բաց թողնվող վարկը:

Յերբ կոոպերատիվի բոլոր անդամները պարզ կերպով ըմբռնեն, թե ինչ լավ հետևանքներ կարող է ունենալ կոոպերատիվ վաճառքի սկզբունքը, կոոպերացիան կը կարողանա զգալիորեն ընդլայնել իր աշխատանքը և գյուղից դուրս մղել, հեռացնել մասնավոր գնողին:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կոոպեր-

ացիայի ամբողջ առևտրական գործը կախված է այն բանից, թե ինչ են անում անդամները կոոպերացիան ամրացնելու և ուժեղացնելու համար: Փայտվաճարներով նրանք (կոոպերատիվի անդամները) իրենց համար սեփական կոոպերատիվ գրամագլուխ են ստեղծում:

Կոոպերատիվի պարտավորությունների հանդեպ իրենց վրա վերցրած պարտականությամբ, նրանք բանկում ավելացնում են նրան բաց թողնվելիք վարկի չափը: Վերջապես կոոպերատիվ վաճառքի սկզբունքների կիրառումով նրանք իրենց կոոպերատիվի առևտրական շրջանառությունը ավելացնում են: Իսկ ընդհանուր առմամբ վաճառահանումից ստացված ոգուտն ու շահը չի մտնում մասնավոր գնողների գրգանը, այլ մնում է կոոպերացված բնակչության մոտ:

Բայց սխալ կլինի կարծել, թե կոոպերատիվի անդամների պարտականությունները միայն նրա մեջ են կայանում, վոր կոոպերատիվին նյութական ոժանդակություն ցույց տան՝ զրամով կամ վարկով: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ նրան վստահելով իր շահերն ու արժեքները պետք է նույն ձևով առնի մի շարք միջոցներ, վորպեսզի կոոպերատիվի աշխատանքը ուղիղ գծով գնա, վորպեսզի կոոպերատիվը իսկապես իր անդամների համար ոգտավետ լինի:

ԿՈՊՊԵՐԱՏԻՎԻ ԱՍԵՆ ՄԻ ԱՆԴԱՍ ՊԵՏՔ Ե ՄԱՍ-
ՆԱԿՑԻ ԿՈՊՊԵՐԱՏԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱ
ԳՐԾԵՐԻ ՎՐԱ ՇՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ

Մենք արդեն խոսել ենք այն մասին, թե կոոպերատիվի համար վորքան մեծ նշանակու-
թյուն ունի լավ վարչություն ունենալու հարցը։ Այդ պատճառով յուրաքանչյուր անդամ պետք
է մասնակցի ընկերության ընդհանուր ժողով-
ներին, յերբ վարչության ընտրություններն են
տեղի ունենում։ Մինչև ժողով գումարելը պետք
է նկատի ունենալ այնպիսի մարդկանց, վորոնց
կարելի չէ վստահել այդպիսի կարևոր հասարա-
կական գործը։ Կոոպերատիվի ամեն մի ան-
դամ պետք է հիշի, վոր ընտրելով վարչու-
թյուն նրա անձնական շահն և կոոպերատիվի
մնացած բոլոր անդամների շահը միայն այն դեպ-
քում կարող է ապահովված լինել, յեթե վար-
չության մեջ ընտրվին ազնիվ, բանիմաց, աշ-
խատող և յեռանդուն մարդիկ։ Սակայն, հաճախ
պատահում է, վոր կոոպերատիվի անդամները
ընդհանուր ժողովներին գալիս են կոոպերատի-
վի անդամների միայն չնչին մասը, այն ել ա-
ռաջուց իրար հետ համաձայնության յեկած
մարդկանց մի խմբակ, վոր վարչության մեջ է
անցկացնում իր մարդուն, վորն այդպիսի կարե-

վոր հասարակական աշխատանքի համար մի-
անգամայն անպետք ու մնասակար է լինում։
Հազվագյուտ չեն և այնպիսի դեպքեր, յերբ
վարչության մեջ խցկվում են այնպիսիները,
վորոնք ընդհանուր գործի մասին շատ քիչ են
հոգ տանում՝ այլ ոգտվում են ամեն մի դեպ-
քից իրենց գրպանները լցնելու համար։ Զարմա-
նալի չէ, վոր նման կոոպերատիվում, ուր ան-
դամները չեն մտածում լավ վարչություն ընտ-
րելու համար, վարչությունը չափազանց ան-
պետք է դուրս գալիս և ոգուտի փոխարեն կո-
պերատիվը միմիայն մնասվում է։

Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ
պետք է իմանա, վոր կոոպերատիվի վիճակը սերտ-
կերպով կապված է նրա սեփական տնտեսության
ամենակարևոր շահի հետ և միջոցներ ձեռք առ-
նի, վորպեսզի վարչությունը վստահելի և հա-
վատարիմ ձեռքերում գտնվի։

ԼԱՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼԸ ՔԻՉ Ե, ՊԵՏՔ Ե
ՆՐԱ ՎՐԱ ՇՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՅԵՎ
ՆՐԱՆ ՈԳՆԵԼ

Չի կարելի իրեն հանգստացնել միայն նը-
րանով, թե հաջողվեց վարչության կազմի համար
հարկավոր մարդիկ ընտրել։ Պետք է մշտապես

հետաքրքրվել այդ վարչության աշխատանքներով և տեղեկանալ այն մասին, թե նա իր պարտականությունները ինչպես է կատարում: Այդ անհրաժեշտ է, առաջինը նրա համար, վորովհետև ամեն մի հասարակական աշխատանք հսկողություն է պահանջում. առանց հսկողության աշխատանքը հաճախ փչացնում է նույնիսկ լավ աշխատողին: Բացի այդ, այն խորհուրդներն ու ցուցմունքները, վորոնք կոոպերատիվի անդամների կողմից տրվում են իրենց վարչությանը, միշտ նրա համար մեծ նշանակություն կունենան: Պետք է նկատի ունենալ, վոր վարչության աշխատանքը չափազանց դժվար և պատասխանատու չէ: Մեր գյուղերում, շատ ել չկան այնպիսի մարդիկ, վորոնք իսկապես կարող են կոոպերատիվ աշխատանքը կարգի գցել. նույնիսկ անբարեխիղճ վարչության անդամներն անգամ կարող են սխալներ անել. ահա թե ինչու յուրաքանչյուր ընկերության աշխատանքը այնպես պետք է դրվի, վորպեսզի հնարավոր լինի հաճախ անդամների ընդհանուր ժողովներ գումարել: Այդ ժողովներում վարչությունը պետք է մանրամասն կերպով գեկուցի իր տարած աշխատանքի մասին և ծանոթացնի ապագա գործունեության ծրագրի հետ: Այդ գեկուցումների հիման վրա կոոպերատիվի ամեն մի անդամ կարող է դա-

տել այն մասին, թե վորքան ուղիղ է տարված աշխատանքը, վորքան աշխատանքի ծրագիրը կազմված է կենսունակ կերպով: Յեվ յեթե մի վորևե բանում նկատված է սխալ կամ զանցառություն, վարչության ուշադրությունը պետք է դարձնել այդ յերևույթի վրա նրան ըստ իրենց հասկացողության պետք է անհրաժեշտ ցուցմունքներ տրվի:

Պետք է անպատճառ վերացնել այն սովորությունը, վոր ընդհանուր ժողովները տարին մի անգամ են գումարվում և սահմանափակվում են միայն իրենց գործունեություն մասին ձևական աշխատություն տալով: Փոքր ընկերություններում և արտերներում ընդհանուր ժողովներ կարելի չէ գումարել ամիսը մի անգամ, համենայն դեպս ամեն մի կոոպերատիվում ընդհանուր ժողովներ պետք է գումարվեն վոչ պակաս, քան 3 ամիսը մի անգամ: Այդ ժողովների ոգուտը վոչ թե նրա մեջ է, վոր շնորհիվ նրանց կապ է պահպանվում կոոպերատիվի անդամների հետ, այլ և նրանում է, վոր նրանք ստիպում են վարչությանը հաճախ վերստուգման յենթարկելու իրենց գործողությունները, զրգում են վարչությանը աշխատանք տանել վորոշ ծրագրով և ոգնում են իմանալու, թե

վոր աշխատանքն ե անդամների մեծամասնու-
թյան համար ամենակարևորը:

ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՁԵՎԵՐ ԵՎՍ

Կոոպերատիվի գիտակից անդամը, չի կա-
րող սակայն բավականանալ միայն ընդհանուր
ժողովներին կանոնավոր հաճախելով: Պետք ե ու-
նենալ և այլ մասնակցություն կոոպերատիվի
ամենօրյա աշխատանքների մեջ: Այնտեղ պետք
ե կազմակերպել մշտական հսկողություն խանութի
աշխատանքի վրա: Դրա համար կոոպերատի-
վի անդամներից ընտրվում ե խանութային հանձ-
նաժողով: Այդ հանձնաժողովը հսկում ե՝ թե ինչ
ապրանքներ ե գնում կոոպերատիվը, ինչ գնե-
րով և ինչ վորակի յեն նրանք: Ամեն մի նկատ-
ված զանցառության մասին հանձնաժողովը
մատնացույց ե անում վարչությանը: Այդ հնա-
քավորություն ե տալիս իր ժամանակին և շու-
տով վերացնել այն սխալները, վորոնք վարչու-
թյան կողմից կարող եյին տեղի ունենալ: Յե-
թե վարչությունը խանութային հանձնաժողովի
ցուցմունքների վրա ուշադրություն չի դարձ-
նում, կարելի յե վերահսկիչ ժողովին դիմել,
խսկ ծայրահեղ դեպքում պետք ե պնդել, վոր
ընդհանուր ժողով գումարովի:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄ ԱՆՀՐԱ- ԺԵՇՏ ԴԵՊՓՈՒՍ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՌԺԱՆԴԱԿՈՒ- ԹՅՈՒՆ ՅՈՒՅՑ ՏԱԼ

Հազվագյուտ չեն այնպիսի դեպքեր, յերբ
կոոպերատիվի ողտի համար անհրաժեշտ ե, վոր
կոոպերատիվի ամեն մի անդամ կոոպերատի-
վին իր անձնական աշխատանքը առաջարկի:
Այդպես ե լինում այն դեպքերում, յերբ հար-
կավոր ե վորեւե շենք կառուցել (որինակ՝ ջրա-
ղաց, ձեթահանք, զավոդ, պանրագործարան, գի-
նու նկուղ շինել և այլն): Կոոպերատիվը հաճախ
իր տրամադրության տակ չի ունենում անհրա-
ժեշտ քանակությամբ դրամ, վորով հնարավոր
լինի կառուցել յուրի կամ պանրի գործարան,
կաթի ընդունման կայան, ջրաղաց, ձեթահանք
և այլն: Այսպիսի դեպքերում անհրաժեշտ դրա-
մի մասը հնարավոր ե լինում փոխ վերցնել
քանկից կամ վարկային ընկերությունից: Բայց
այդպիսի դեպքերում ավելի զգալի ոգնություն
պիտի ցույց տան իրենք կոոպերատիվի անդամ-
ները, վորոնք միահամուռ ջանքերով պիտի կը-
րեն—բերեն շենքի համար անհրաժեշտ նյութե-
քը, հողային և այլ աշխատանքները պիտք ե
կատարեն:

Ընկերութեան ամեն մի անդամի կատարած աշխատանքը գնահատվում է համաձայն վորոշ չափի (նորմայի) և գրվում է ընկերութեան գրքերում, վորպես անդամի կողմից ընկերութեանը վորոշ ժամանակով արված փոխառութիւն: Յերբ վոր շինութիւնը վերջանում է, գործարանը կամ շրջացը սկսում է աշխատել և ոգուտ բերել, կոոպերատիվը ընկերութեան ամեն մի անդամին վճարում է այնքան դրամ, ինչ գումարի չափով վոր անդամներից ամեն մեկը աշխատել է: Ամեն մի այդտեսակ աշխատանք հսկայական նշանակութիւն ունի կոոպերատիվ գործի ամրացման տեսակետից, վորովհետև նա ավելացնում է թե այն արժեքներէ քանակը, վորոնք կոոպերատիվին են պատկանում և թե կոոպերատիվի բոլոր անդամներին համախմբում է ընդհանուր գործի շուրջը:

Հասկանալի յե, վոր այդպիսի աշխատանքը պետք է տարվի արդար և խելացի կերպով: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պետք է ճիշտ կերպով իմանա թե նա ինչ է անելու: Աշխատանքը անդամների միջև պետք է հավասար կերպով բաժանվի. կատարված աշխատանքին պետք է ճիշտ գնահատութիւն տրվի և նա պետք է ուղիղ հաշվառման յենթարկվի: Աշխատանքի վերջանալուց հետո անդամների ընդհա-

նուր ժողովում գործի ընթացքի մասին պետք է մանրամասն գեկուցում տրվի, թե կոոպերատիվի անդամներից վորոնք են աշխատանքի մեջ մասնակցութիւն ունեցել և այդ աշխատանքներն ինչպիսի արդիւնքներ են տվել:

Յ Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պետք է մի քանի կարևոր ու հասարակ բաներ իմանա.—

1. Նա պետք է գիտենա, թե ինչ բան է կոոպերացիան և նա ինչով կարող է ոգնել գյուղացիական տնտեսութեանը:
2. Ինչով է տարբերվում Խորհրդային կոոպերացիան նախկին ժամանակվա կոոպերացիայից և կապիտալիստական յերկրների կոոպերացիայից և պետք է հիշե, վոր կոոպերացիան չքավոր և միջակ գյուղացիութեան համար վստահելի նեցուկ է:
3. Յուրաքանչյուրը պետք է իմանա, թե Խորհրդային Միութեան մեջ կոոպերացիան ինչ ձևերով է զարգանում և ինչ խնդիրներ են առաջադրում կոոպերացիայի զանազան տեսակները:
4. Պետք է կարողանալ տարբերել կոոպերատիվի տարած լավ աշխատանքը վատից և հիշել այն, վոր այն կոոպերատիվն է վատ լինում, վորի փայտերե-

ըը (անդամները) վատ են: 5. Կոոպերատիվի ամեն մի անդամ պետք է իր կոոպերատիվի գործերում կենդանի մասնակցութիւն ունենա: 6. Նյութական մասնակցութիւնը կայանում է՝ փայտավճար մուծելու, կոոպերատիվի հետ կոոպերատիվ վաճառքի կանոնների համաձայն աշխատանք տանելու մեջ: 7. Կոոպերատիվի ամեն մի անդամ պետք է մասնակցի կոոպերատիվի գործերին, վորպես կոոպերատիվին կից վորեւէ հանձնաժողովի կամ սեկցիայի անդամ, կամ վորպես ընդհանուր ժողովին մասնակցող, վորը (ընդհանուր ժողովը) պետք է լինի կոոպերատիվի իսկական տերը: 8. Կոոպերատիվի ամեն մի անդամ կոոպերատիվի ընդհանուր ժողովում իր ունեցած մասնակցութեամբ կարող է ոգնել վարչութիւնը ուղիղ կերպով աշխատելու, վերացնելու այն սխալներն ու թերութիւնները, վորոնք տեղի յեն ունեցել. կարող է ոգնել վարչութիւնն աշխատանքը այնպես տանելու, վորպեսզի գյուղացիութիւնը ամենաշատ ոգուտը տա: 9. Անհրաժեշտութեան դեպքում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պարտավոր է իր անձնական աշխատանքով մասնակցելու կոոպերատիվի գործերին:

Տարեց-տարի ավելի ու ավելի յե ծավալվում այն աշխատանքը, վոր կատարվում է ամ-

բողջ Խորհրդային Միութեան մեջ բոլոր տեսակի կոոպերացիաների կողմից: Կոոպերացիան իր մեջ է գրավում գյուղացիութեան տնտեսութեան նորանոր ճյուղեր: Նրա շարքերում կան բազմամիլիոն գյուղացիական տնտեսութիւններ: Ներկայումս կոոպերացիայի կողմից վաճառքի յեն հանվում մթերքներ, պտուղներ, մեղր, գինի և այլն:

Գյուղացիական տնտեսութեան մթերքների այդ հոսանքի դիմաց—կոոպերացիայի միջոցով քաղաքից դեպի գյուղն է գնում մի այլ հոսանք, վորը գյուղ է տանում այնպիսի ապրանքներ և գործիքներ (որինակ՝ մանուֆակտուրա, գյուղմեքենաներ և այլն), վորոնց կարիքն այնքան շատ է զգում գյուղը:

Կոոպերացիայի կարևորագույն խնդիրը ներանումն է կայանում, վորպեսզի վորքան հնարավոր է ավելացնի այն ապրանքների քանակը, վորոնց քաղաքը կարող է արտադրել և առանց վորեւէ միջնորդների այդ ապրանքները գյուղին հանձնել ամենաձեռնտու գներով:

Միևնույն ժամանակ կոոպերացիան պետք է ոգնի գյուղին, վոր նա ավելի ևս հարստանա, ավելի ևս բարձրացնի իր բարեկեցութիւնը և հենվելով միասին կատարվող աշխատանքի վրա, հեշտացնի դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0203235

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

Դիմել՝ Յերեվանի, Հանգյալովտուղ – Կոպրածին